ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *«ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-Ի»*

ք. Երևան 27 մարտի.2017 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և *«Ինտերօրթ»ՍՊԸ*-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լ. Պետրոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրությամբ, իսկ պայմանագրի արդյունքը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է _____ (____ տառերով_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան _____ 20 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **16** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Ինտերօրթո» ՍՊԸ
ք. Երևան Կառավարական տուն 3	ք. Երևան Սեպուհի 7
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 00074171
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011016723	Հ/Հ 1510031253420100
Աշխատակազմի ղեկավար .....Ա. Գրիգորյան (ստորագրություն)	Տնօրեն.....Լ. Պետրոսյան (ստորագրություն)

Հավելված 1
« 27 » մարտի 2017թ. կնքված
N «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-Ի» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում օրթեզների պատրաստման ծառայությունների

Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող օրթեզների պատրասման ծառայությունները մատուցվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, իսկ ծառայությունների մատուցումը կարգավորվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2013 թվականի հունիսի 27-ի N 92-Ա/1 հրամանով սահմանված կարգով, ստորև բերված ցուցանիշներին համապատասխան:

Չափաբաժին	Անվանում	Ենթատեսակ	Տեխնիկական բնութագիր
15	Սրունքի օրթոպրոթեզ կաշվից	-	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև սրունքի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ սրունք-թաթային հոդում: Վերջույթի կարճացումը փոխհատուցվում է արհեստական ոտնաթաթով: Պատրաստվում է մետաղյա շինաներից և կաշվից: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, կոսմետիկ
16	Սրունքի օրթոպրոթեզ պլաստիկից	-	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև սրունքի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ սրունք-թաթային հոդում: Վերջույթի կարճացումը փոխհատուցվում է արհեստական ոտնաթաթով: Պատրաստվում է պլաստիկից և ժամանակակից մոդուլյար հոդերով և դետալներով: Տրամադրվում է 1 անդամահատված ծայրատի համար 3 գուլպա, 2 ծայրատի 6 գուլպա: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, կոսմետիկ
17	Սրունքի օրթոպրոթեզ լամինացիայով	-	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային հոդին՝ մինչև սրունքի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ սրունք-թաթային հոդում: Վերջույթի կարճացումը փոխհատուցվում է արհեստական ոտնաթաթով: Պատրաստվում է պլաստիկից և ժամանակակից մոդուլյար հոդերով և դետալներով: Տրամադրվում է 1 անդամահատված ծայրատի համար 3 գուլպա, 2 ծայրատի՝ 6 գուլպա: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, կոսմետիկ
20	Ազդրի օրթոպրոթեզ լամինացիայով	20.1 Ազդրի օրթոպրոթեզ լամինացիայով	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում, վերջույթի կարճացումը փոխհատուցվում է արհեստական ոտնաթաթով: Պատրաստվում է պլաստիկից՝ լամինացիայով և ժամանակակից մոդուլյար հոդերով և դետալներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, կոսմետիկ
		20.2 Եռակողմ զատիչ օրթեզ հոդով, լամինացիայով	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, ստորին վերջույթը գտնվում է զատված դիրքում, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում: Պատրաստվում է պլաստիկից ՝ լամինացիայով և ժամանակակից մոդուլյար հոդերով և դետալներով:: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող

Վերին վերջույթների պրոթեզներ

81-84-րդ չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1. Ստանդարտը	Գերմանական <ՕԹԹՈ-ԲՈՔ> ֆիրմայի կամ համարժեք նյութերով թողարկվող և գերմանական տեխնոլոգիայով՝ համապատասխան ISO-ի
2. Տեխնիկական ցուցանիշները	Յուրաքանչյուր շահառուի անդամահատված վերջույթին համապատասխան և ըստ կտրված վերջույթի ծայրատի չափի: Մարմնագույն, մարդու իրական վերջույթներից թեթև և առողջությանը չվնասող նյութերով, էկզոսկելիտար սկզբունքով, կոսմետիկորեն գեղեցիկ: Չափերը՝ առողջ վերջույթին համապատասխան:
3. Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործ-վող նյութերը չիրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին
4. Գնման պայմանները	Պրոթեզավորման գործընթացի ժամկետի միջին տևողու-թյունը 15 օրից մինչև 1 ամիս՝ կախված բարդության աստի-ճանից, որի ընթացքում կատարվում են չափափորձարկում-ներ, շահառուին սովորեցվում է պրոթեզից օգտվելու ձևը
5. Պարագայի տրամադրումը	Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո
6. Երաշխիքային ժամկետը	Մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգում-ներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմա-կերպության միջոցների հաշվին
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 81 Նախաբազկի պրոթեզ	Հատուկ դետալի՝ ձգանի օգնությամբ ձեռքի մատների շարժումների հնարավորություն տվող շարժական պրոթեզ, մետաղյա մեխանիզմներով *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 հատ գուլպա կամ ձեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրատի՝ 6 գուլպա կամ ձեռնոց(քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*
Չափաբաժին 82 Նախաբազկի կոսմետիկ պրոթեզ	Շարժումներ չկատարող, կոսմետիկ նպատակով տեղադրվող պրոթեզ *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 հատ գուլպա կամ ձեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրատի՝ 6 գուլպա կամ ձեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*
Չափաբաժին 83	Հատուկ դետալի՝ ձգանի օգնությամբ ձեռքի և ձեռքի մատների

	Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 հատ գուլպա կամ ձեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրատի՝ 6 գուլպա կամ ձեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:
Չափաբաժին 84 Բազկի կոսմետիկ պրոթեզ	Շարժումներ չկատարող, կոսմետիկ նպատակով տեղադրվող պրոթեզ *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 հատ գուլպա կամ ձեռնոց (քանակները համաձայն շահառուի ցանկության), 2 ծայրատի՝ 6 գուլպա կամ ձեռնոց(քանակները համաձայն շահառուի ցանկության): Գուլպա-ձեռնոցները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*
Ստորին վերջույթների պրոթեզներ	
85-ից 89-րդ չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1. Ստանդարտը	Գերմանական <ՕԹԹՈ-ԲՈՔ> ֆիրմայի կամ համարժեք նյութերով թողարկվող և գերմանական տեխնոլոգիայով՝ համապատասխան ISO-ի
2. Տեխնիկական ցուցանիշները	Յուրաքանչյուր շահառուի անդամահատված վերջույթին համապատասխան և ըստ կտրված վերջույթի ծայրատի չափի: Մարմնագույն, մարդու իրական վերջույթներից թեթև և առողջությանը չվնասող նյութերով, էկզոսկելիտար սկզբունքով, կոսմետիկորեն գեղեցիկ: Չափերը՝ առողջ վերջույթին համապատասխան:
3. Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործ-վող նյութերը չիրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին
4. Գնման պայմանները	Պրոթեզավորման գործընթացի միջին ժամկետի տևողու-թյունը 15 օրից մինչև 1 ամիս՝ կախված բարդության աստի-ճանից, որի ընթացքում կատարվում են չափափորձարկում-ներ, շահառուին սովորեցնում պրոթեզից օգտվելու ձևը
5. Պարագայի տրամադրումը	Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո
6. Երաշխիքային ժամկետը	Մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգում-ներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմա-կերպության միջոցների հաշվին
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 85 Սրունքի պրոթեզ	Սրունքի անդամահատված ծայրատի պրոթեզ՝ լամինացիայով *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա*

	պրոթեզ սպացողներին:
Չափաբաժին 86 Սրունքի պրոթեզ մանժետով	Ծնկահոդից անմիջապես ցած անդամահատված ծայրատի պրոթեզ, որն ազդրին ամրացվում է կաշվե մանժետի և շինայի օգնությամբ: *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզը սպացողներին:*
Չափաբաժին 87 Սրունքի պրոթեզ ըստ Պիրոգովի և Սայմի	Ըստ Պիրոգովի և Սայմի եղանակի /հեռացված է ամբողջ ոտնաթաթը՝ սրունք-թաթային հոդը պահպանված չէ/ անդամահատված ծայրատի պրոթեզ
Չափաբաժին 88 Սրունքի պրոթեզ ըստ Շոպարտի	Ըստ Շոպարտի եղանակի ոտնաթաթի անդամահատված ծայրատի /սրունք-թաթային հոդը պահպանված է/ պրոթեզ
Չափաբաժին 89 Թաթի պրոթեզ՝ առջևի մաս	Ոտնաթաթի առաջնային մասի անդամահատված ծայրատի /սրունք-թաթային հոդը պահպանված է/ պրոթեզ
Ստորին վերջույթների մոդուլյար պրոթեզներ	
90-ից 96-րդ չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1. Ստանդարտը	Գերմանական <ՕԹԹՈ-ԲՈՔ> ֆիրմայի կամ համարժեք նյութերով թողարկվող և գերմանական տեխնոլոգիայով՝ համապատասխան ISO-ի
2. Տեխնիկական ցուցանիշները	Յուրաքանչյուր շահառուի անդամահատված վերջույթին, կտրված վերջույթի ծայրատի չափին առանձնահատկություններին, առողջական վիճակին (շաքարային դիաբետ) և քաշին համապատասխան: Օգտագործվում են սիլիկոնե լայներ, սիլիկոնե գուլպաներ, ծունկ և այլ դետալներ: Մարմնագույն, մարդու իրական վերջույթներից թեթև և առողջությանը չվնասող նյութերով, էկզոսկելիտար սկզբունքով, կոսմետիկորեն գեղեցիկ: Չափերը՝ առողջ վերջույթին համապատասխան:
3. Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործ-վող նյութերը լինեն չհրդեհվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին
4. Գնման պայմանները	Պրոթեզավորման գործընթացի միջին ժամկետի տևողու-թյունը 15 օրից մինչև 1 ամիս՝ կախված բարդության աստի-ճանից, որի ընթացքում կատարվում են չափափորձարկում-ներ, շահառուին սովորեցնում պրոթեզից օգտվելու ձևը:
5. Պարագայի տրամադրումը	Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո

	իրականացվում են ծառայություն մատուցող կազմա-կերպության միջոցների հաշվին
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 90 Ազդրի մոդուլյար պրոթեզ	Ազդրի անդամահատված ծայրատի պրոթեզ, ծնկահոդին և սրունք-թաթային հոդին փոխարինող ծնկի տեղադրմամբ և լամինացիայով *Անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև ազդրի ծայրատը պրոթեզի հետ ամրացնող ռետինե կտորից հարմարանք՝ ամրագոտիներով*
Չափաբաժին 91 Ազդրի մոդուլյար պրոթեզ ISNI	Ազդրի անդամահատված ծայրատի պրոթեզ, ծնկահոդին և սրունք-թաթային հոդին փոխարինող ծնկի տեղադրմամբ և լամինացիայով, հիմնականում շաքարային դիաբետ ունեցող անձանց համար, մաշկը չվնասող փափուկ նյութի՝ տերմոլինի օգտագործմամբ *Անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև ազդրի ծայրատը պրոթեզի հետ ամրացնող ռետինե կտորից հարմարանք՝ ամրագոտիներով*
Չափաբաժին 92 Ազդրի մոդուլյար պրոթեզ ISNI /սիլիկոնե լայներով/	Ազդրի անդամահատված ծայրատի պրոթեզ, ծնկահոդին և սրունք-թաթային հոդին փոխարինող ծնկի տեղադրմամբ և լամինացիայով, հիմնականում շաքարային դիաբետ ունեցող անձանց համար, օգտագործվում է մաշկը չվնասող փափուկ նյութ՝ տերմոլին և սիլիկոնե լայներ *Անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև ազդրի ծայրատը պրոթեզի հետ ամրացնող ռետինե կտորից հարմարանք՝ ամրագոտիներով:*
Չափաբաժին 93 Սրունքի մոդուլյար պրոթեզ	Սրունքի անդամահատված ծայրատի պրոթեզ՝ լամինացիայով *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*
Չափաբաժին 94 Սրունքի մոդուլյար պրոթեզ՝ սիլիկոնե լայներով	Սրունքի անդամահատված ծայրատի պրոթեզ՝ լամինացիայով, հիմնականում շաքարային դիաբետ ունեցող անձանց համար, օգտագործվում է մաշկը չվնասող փափուկ նյութ՝ սիլիկոնե լայներ:
Չափաբաժին 95 Կոնք-ազդրի էքզարտիկ պրոթեզ	Կոնք-ազդրային հոդի մակարդակում ստորին վերջույթի անդամահատումից հետո կատարվող պրոթեզ, տեղադրվում են կոնք-ազդրային և ծնկան հոդին փոխարինող շարժական ծնկեր՝ փափուկ և կոշտ լամինացիայով
Չափաբաժին 96	Ծնկան հոդի մակարդակում ստորին վերջույթի անդամահատումից հետո կատարվող պրոթեզ, տեղադրվում է

Ստորին վերջույթների բուժամարզական պրոթեզներ	
97 և 98-րդ չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջներ	
1. Ստանդարտը	Գերմանական <ՕԹԹՈ-ԲՈՔ> ֆիրմայի կամ համարժեք նյութերով թողարկվող և գերմանական տեխնոլոգիայով՝ համապատասխան ISO-ի
2. Տեխնիկական ցուցանիշները	Յուրաքանչյուր շահառուի անդամահատված վերջույթին համապատասխան և ըստ կտրված վերջույթի ծայրատի չափի: Մարմնագույն, մարդու իրական վերջույթներից թեթև և առողջությանը չվնասող նյութերով, էկզոսկելիտար սկզբունքով, կոսմետիկորեն գեղեցիկ: Չափերը՝ առողջ վերջույթին համապատասխան:
3. Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը լինեն չիրդեիվող, բավարարեն օրգանիզմի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին
4. Գնման պայմանները	Պրոթեզավորման գործընթացի միջին ժամկետի տևողու-թյունը 15 օրից մինչև 1 ամիս՝ կախված բարդության աստի-ճանից, որի ընթացքում կատարվում են չափափորձարկում-ներ, շահառուին սովորեցնում պրոթեզից օգտվելու ձևը:
5. Պարագայի տրամադրումը	Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական և շահառուին հանձնվում փորձարկումից հետո
6. Երաշխիքային ժամկետը	Շահագործման ամբողջ ժամանակահատվածը, որի ընթացքում պահանջվող վերանորոգումներն իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 97 Ազդրի բուժամարզական պրոթեզ՝ լամինացիայով	Ազդրի անդամահատված ծայրատի պրոթեզ՝ առանց կոսմետիկայի *Անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև ազդրի ծայրատը պրոթեզի հետ ամրացնող ռետինե կլորից հարմարանք՝ ամրագոտիներով:*
Չափաբաժին 98 Սրունքի բուժամարզական պրոթեզ՝ լամինացիայով	Սրունքի անդամահատված ծայրատի պրոթեզ՝ առանց կոսմետիկայի *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա:*
Սուպինատոր (ներդիր)	
Չափաբաժին 102 Ներդիրներ գիպսային ատրճենահանումը	Հարթաթաթությունը և թաթի դեֆեկտն ուղղող, կոշտ և փափուկ կաշվից և խցանե միջնադիրով ներդիրներ

105 և 106-րդ չափաբաժիններին ներկայացվող ընդհանուր պահանջները	
1. Ստանդարտը	Ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից շահառուին նախկինում տրամադրված պրոթեզաօրթոպեդիկ պարագաների ընթացիկ նորոգում
2. Տեխնիկական ցուցանիշները	Պրոթեզա օրթոպեդիկ պարագաների ծառայողական, ֆունկցիոնալ և կոսմետիկ վերականգնում
3. Գնման պայմանները	Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգման մի-ջին ժամկետը պայմանավորված է վերին և ստորին վերջույթների ծայրատի ֆիզիոլոգիական փոփոխությունից և ֆիզիկապես մաշվելու կամ խզվելու աստիճանից, շահառուի առողջական վիճակից և նրա ֆիզիկական ակտիվությունից
4. Պարագայի տրամադրումը	Յուրաքանչյուր շահառուի համար վերանորոգումն իրականացվում է անհատական և հանձնվում շահառուին՝ փորձարկումից հետո
Տվյալ չափաբաժնով գնման առարկային ներկայացվող պահանջները	
Չափաբաժին 105 Վերին վերջույթի պրոթեզների վերանորոգում	Պարագաները վերանորոգվում են չօգտագործված, գերմանական <ՕԹԹՈ-ԲՈՔ> ֆիրմայի կամ համարժեք նյութերով, վերանորոգման արդյունքում ամբողջովին վերականգնվում են պատրաստման պահին պարագայի ունեցած չափանիշները և հնարավորությունները
Չափաբաժին 106 Ստորին վերջույթի պրոթեզների վերանորոգում	Պարագաները վերանորոգվում են չօգտագործված, գերմանական <ՕԹԹՈ-ԲՈՔ> ֆիրմայի կամ համարժեք նյութերով, վերանորոգման արդյունքում ամբողջովին վերականգնվում են պատրաստման պահին պարագայի ունեցած չափանիշները և հնարավորությունները

Շահառուին տրամադրվող պարագաները և ծառայությունները պետք է լինեն չօգտագործված, նոր նյութերից:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝

1. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)

2. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.

3. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցումը, մասնավորապես, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ,մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության:

4. Իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների

կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով***:

5. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ.

6) համապատասխան և մատչելի շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

6. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության			Նախատեսվում է գնել 2017 թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
15	Սրունքի օրթոպրոթեզ կաշվից	հատ	157000	1		1		1		1		4	
16	Սրունքի օրթոպրոթեզ պլաստիկից	հատ	216000			1						1	
17	Սրունքի օրթոպրոթեզ լամինացիայով	հատ	228000	1		2		1		2		6	
20	Ազդրի օրթոպրոթեզ լամինացիայով	հատ	410000			1				1		2	
81	Նախաբազկի պրոթեզ	հատ	530000	2		2		2		2		8	
82	Նախաբազկի կոսմետիկ պրոթեզ	հատ	472000	2		2		2		1		7	
83	Բազկի պրոթեզ	հատ	985000	1		1		0		1		3	
84	Բազկի կոսմետիկ պրոթեզ	հատ	880000	1		1		1		0		3	
85	Սրունքի պրոթեզ	հատ	430000	37		37		36		37		147	
86	Սրունքի պրոթեզ մանժետով	հատ	555000	1		0		1		1		3	
87	Սրունքի պրոթեզ ըստ Պիրոգովի և Սայմի	հատ	320000	3		3		3		3		12	
88	Սրունքի պրոթեզ ըստ	հատ	270000	4		3		4		4		15	

89	Թաթի պրոթեզ՝ առջևի մաս	հատ	170000	0		1		0		0		1	
90	Ազդրի մոդուլյար պրոթեզ	հատ	1040000	45		46		46		46		183	
91	Ազդրի մոդուլյար պրոթեզ ISNI	հատ	1030000	0		1		0		1		2	
92	Ազդրի մոդուլյար պրոթեզ ISNI /սիլիկոնե լայներով/	հատ	1825000	1		2		1		1		5	
93	Սրունքի մոդուլյար պրոթեզ	հատ	590000	32		31		31		31		125	
94	Սրունքի մոդուլյար պրոթեզ՝ սիլիկոնե լայներով	հատ	1155000	6		7		6		6		25	
95	Կոնք-ազդրի էքզարտիկ պրոթեզ	հատ	1243000	3		3		3		3		12	
96	Ծնկահոդի էքզարտիկ պրոթեզ	հատ	1150000	3		2		3		3		11	
97	Ազդրի բուժամարզական պրոթեզ՝ լամինացիայով	հատ	740000	11		11		11		11		44	
98	Սրունքի բուժամարզական պրոթեզ՝ լամինացիայով	հատ	378000	13		14		13		13		53	
102	Ներդիրներ գիպսային պատճենահանմամբ	զույգ	9500	2		1		1		1		5	
105	Վերին վերջույթի պրոթեզների վերանորոգում	հատ	195000	3		3		3		3		12	
106	Ստորին վերջույթի պրոթեզների վերանորոգում	հատ	87000	88		87		87		88		350	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 01506515
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011016723

Աշխատանքային ղեկավար ..... Ա. Գրիգորյան
(անուն, ազգանուն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ինտերօրթո» ՍՊԸ

ք. Երևան Սեպուհի 7
ՀՎՀՀ՝ 00074171
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510031253420100

Տնօրեն ..... Լ. Պետրոսյան
(անուն, ազգանուն)

Հավելված 2
« 27 » մարտի 2017 թ. կնքված
N «ԱՍՀՆ-ՇՀԾՁԲ-17/2-Ի» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 20 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
15. 16. 17. 20. 81-98. 102. 105. 106.	Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայություններ													

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան,Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011016723

Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ինտերօրթո» ՍՊԸ

ք. Երևան Սեպուհի 7
ՀՎՀՀ՝ 00074171
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510031253420100

Տնօրեն ..... Լ. Պետրոսյան
(ստորագրություն)

Հավելված 3
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<____>> _____20 թ. կնքված
N _____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն